ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գենդերային քաղաքականության 2012 թվականի միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ

հ/հ	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսավորման աղբյուրները
1	Ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ՄԱԿ-ի և ԱՄԿ-ի սոցիալ-տնտեսական ոլորտի կոնվեցիաների, ինչպես նաև ՄԱԿ-ի հազարամյակի նպատակների կատարման մշտադիտարկում	մշտադիտարկման և կատարված աշխատանքների արդյունքում նկատվել է առջընթաց սեռի հատկանիշով խտրականության հաղթահարման, սոցիալ-տնտեսական ոլորտում, աշխատանքի և զբաղվածության ոլորտում կանանց փաստացի հավասարության ձեռքբերման և կանանց աղքատություն կրճատման ոլորտում	ֆինանսավորում չի պահանջվում
2	Խթանել գյուղի կանանց աղքատության հաղթահարման ուղղված ծրագրերի իրականացումը, մասնավորապես, մատչելի պայմաններով տրվող վարկային և միկրովարկային ծրագրերի իրականացումը գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում	կազմակերպվել և անցկացվել են համայնքներում կանանց հետ սեմինարներ և իրազեկման աշխատանքներ , կանանց ախքատաության հաղթահարման, սոցիալ տնտեսական զարգացման նպատակով, իրազեկման աշխատանքներ են տարվել վարկային և միկրովարկային ծրագրերի վերաբերյալ, աջակցություն է ցուցաբերվել ծրագրերի նպատակային և արդյունավետ իրականացմանը արդյունքում բարձրացել է կանանց զբացվածության մակարդակը	ֆինանսավորում չի պահանջվում
3	Ներդնել գենդերային գիտելիքների հաղորդման բաղադրիչ/մոդուլ/ մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացներում	մարզի շուրջ 120 դպրոցներում անցկացվել են սեմինարներ գենդերային հիմնախնդիրների և կարծրատիպերի հաղթահարման, գենդերային հավասարակշռությունն ապահովող դաստիարակության և ուսուցման իրականացման վերաբերյալ, տրամադրվել է համապատասխան նյութեր	ֆինանսավորում չի պահանջվում

4	Նվազեցնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի տարածումը մարդկանց իրազեկման և գիտելիքների բարձրացման միջոցով	մարզի համայնքներում բուժ ամբուլատորիաների աշխատակիցների հետ համատեղ բնակչության շրջանում անցկացվել են հանդիպումներ, որի արդյունքում բարձրացվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ –ի վարակի տարածման և կանխարգելման վերաբերյալ բնակչության գիտելիքները	ֆինանսավորում չի պահանջվում
5	Ամրապնդել համագործակցությունը պետական մարմինների և ՀԼՄ-ների միջև՝ կանանց և տղամարդկանց միջև սոցիալական հավասարության ձեռքբերման հարցում	լուսաբանվել են պետության կողմից հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված քայլեր, տրամադրվել են նյութեր, համայնքներում անցկացվել են հանդիպումներ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ, որի արդյունքում զգալիորեն աճել էր ՏԻՄ ընտրություններում կանանց մասնակցության թիվը	ֆինանսավորում չի պահանջվում